ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-սեպտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 114.1%, 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.4%, իսկ 2020թ. հունվար-սեպտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 93.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 տրլ 881 մլրդ 825.7 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 259 մլրդ 578.7 մլն. և 448 մլրդ. 814.4 մլն դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 672 մլրդ 821 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 53 մլրդ 447.8 մլն. և 117 մլրդ. 609.6 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 300 մլրդ 215.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 45 մլրդ 759.6 մլն. և 75 մլրդ. 847.9 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3 տրիլիոն 18 մլրդ 143.1 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 636 մլրդ 354.5 մլն և 975 մլրդ 533.2 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 տրլ 824 մլրդ 288.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 466 մլրդ 773.6 մլն և 558 մլրդ 55.5 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 110%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.7%-ի և 101.4%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 99.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 98.5%-ի և 100.5%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 114.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.4%-ի և 84.3%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 114.5%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.7%-ի և 88.6%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 127.1%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.4%-ի և 88.3%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-սեպտեմբերին կազմել է 400 մլրդ 258.4 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 41.3 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 108.5 մրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-սեպտեմբերին կազմել է 1 տրիլիոն 218 մլրդ 616,6 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 256.3 և 282.3 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-սեպտեմբերին կազմել է 242 մլրդ 498.9 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 41.4 և 53.7 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-սեպտեմբերին կազմել է 20 մլրդ 451.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3 մլրդ 119.5 մլն և 4 մլրդ 58.5 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 93.61%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.1%-ի և 116.7%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 119.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.4%-ի և 97.3%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 102.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.3%-ի և 100.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 107.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.5%-ի և 83.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 185 մլրդ 693.8 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 12.3 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 87.7 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 315 մլրդ 557,2 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 81.8 և 103,7 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 553 մլրդ 613,2 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 202.1 և 209.5 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 106.8%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 63.1%-ի և 91%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 135%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.1%-ի և 107.6%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 145.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.8%-ի և 107.4%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 108.6%, 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.7%, 2020թ. հունվար-սեպտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.9%: ՍԳԻ-ն 2022թ. սեպտեմբերին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 105.7%, 2021թ. սեպտեմբերին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 103.6%, 2020թ. սեպտեմբերին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 98.6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 182 մլրդ 99 մլն դրամ, ինչը 12.6 մլրդ դրամով կամ 1.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 285.5 մլրդ դրամով կամ 31.8%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. սեպտեմբերի դրությամբ կազմել է 75589 մարդ, ինչը 13491 մարդով կամ 15.1%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12958 մարդով կամ 14.6%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. սեպտեմբերի դրությամբ կազմել է 51322 մարդ, ինչը 8862 մարդով կամ 14.7%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 8803 մարդով կամ 14.6%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինասավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 9 մլրդ 306.6 մլն դոլար, ինչը 3 մլրդ 578 մլն դոլարով կամ 62.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4 մլրդ 204.4 մլն դոլարով կամ 82.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է -2,287.8 մլն դոլար, ինչը 843.2 մլն դոլարով կամ 58.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 842.4 մլն դոլարով կամ 58.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3 մլրդ 509.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 367.4 մլն դոլարով կամ 63.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1 մլրդ 681 մլն դոլարով կամ 91.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 5 մլրդ 797.2 մլն դոլար, ինչը 2 մլրդ 210.6 մլն դոլարով կամ 61.6%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 523.4 մլն դոլարով կամ 77.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 225436 դրամ, ինչը 26679 դրամով կամ 13.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 38474 դրամով կամ 20.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 51 մլրդ 435 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 85 մլրդ 837.7 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -137 մլրդ 272.7 մլն դրամ: 2021թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 147 մլրդ 522.7 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -92 մլրդ 323.3 մլն և 239 մլրդ 846 մլն դրամ: 2020թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 154 մլրդ 799.2 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 173 մլրդ 606.6 մլն և -18,807.4 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ